

12258



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



« 07 » 11 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 242 - 24

Նախաձեռնող՝

«Լուր» ՍՊԸ

ք.Երևան, Նոր Նորք, Միկոյան փ., 213, բն. 42

Գործունեությունը՝

Երասխահուն բնակավայրում կրթահամալիրի  
կառուցում  
Արմավիրի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 242 - 24

«07» նոյեմբերի 2024թ.

**Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Երասխահուն բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	«Լուր» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակ՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզ, Մեծամոր համայնքի, Երասխահուն բնակավայր

**Ներածական մաս.** «Լուր» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Երասխահուն բնակավայրում կառուցել կրթահամալիր: Գործունեությունն իրականացվում է «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ № 19062024, / ծածկագիրը՝ B5QHJATTFIAT/, Մեծամոր համայնքի ղեկավարի կողմից 15.05.2024թ.-ին տրված № 82 ճարտարապետահատակագծային առաջադրանքը: Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործում:

փորձ  
նի



**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Երասխահուն բնակավայրի 1-ին փողոց թիվ 2 հասցեում: Հողամասի մակերեսը կազմում 1.6072 հա՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի: Ֆիզիկատերերաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա, բացակայում են: Սակայն անհրաժեշտ է նշել, որ տեղամասում գրունտային ջրերն ունեն բարձր տեղադրում, և երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքի վերին մասում գրունտները ջրհագեցած են: Գործունեության տարածքը յուրացված է տարածքի կառուցապատմամբ, իսկ ինժեներատերերաբանական ուսումնասիրությունների արդյունքների համաձայն գործունեության տարածքում հողաբուսական շերտը բացակայում է:

Ներկայացվող գործունեության ընթացքում ուղղակի ազդեցություններ տարածքի հողային ռեսուրսների վրա չեն կանխատեսվում, քանի որ նախագծվող կրթահամալիրը կառուցվելու է արդեն իսկ հին դպրոցի շենքով յուրացված հողամասում, որտեղ բուսահողը բացակայում է: Ինժեներատերերաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Մակերեսի ռելիեֆը հարթավայրային է, բացարձակ նիշերը տատանվում են 839.0-840.0 մետրի սահմաններում: Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող տարածքների և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ: Գոյություն ունեցող դպրոցի կտուրին առկա են 10-15 արագիլների բներ, որոնց տեղափոխության հարց կարող է առաջանալ, եթե գոյություն ունեցող դպրոցի ապամոնտաժման աշխատանքները սկսվեն այնպիսի ժամանակահատվածում, երբ արագիլների չուի սեզոնը չէ: Դպրոցի ապամոնտաժման աշխատանքները իրականացվելու են հոկտեմբեր-հունվար ընկած ժամանակահատվածում երբ արագիլները չվել են: Էլեկտրական սյուների ապամոնտաժման դեպքում կկառուցեն այլ հենասյուներ, որոնք կծառայեն արագիլների բների համար: Դպրոցի ապամոնտաժման աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է արագիլների բների տեղափոխության հետ կապված աշխատանքներում ներգրավվելու են համապատասխան մասնագետներ շրջակա միջավայրի նախարարությունից, բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնից, ինչպես նաև ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն ՊՈԱԿ-ից:

Նախագծով նախատեսվում է իրականացնել՝ նոր կրթահամալիրի շենքի կառուցում՝ գոյություն ունեցող դպրոցի տարածքում: Գոյություն ունեցող դպրոցի շենքը ապամոնտաժվելու է և նոր կրթահամալիրի կառուցապատումից հետո ազատ տարածքները և ապամոնտաժված դպրոցի տարածքը բարեկարգվելու և կանաչապատվելու է:

Համաձայն նախագծային լուծումների՝ նոր կառուցվող կրթահամալիրը նախատեսված է լինելու մինչև 200 աշակերտի, և մինչև 80 մանկապարտեզի սաների համար: Շենքի ծավալատարածական լուծումն իրենից ներկայացնում է երեք իրար կցված ծավալներից՝ երկհարկանի հիմնական դպրոցի մասնանաշենքից, մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենքերից ու երկհարկանի մանկապարտեզից:



Դպրոցի, մանկապարտեզի և մարզադահլիճի մուտքերի մոտ նախատեսված են թեքահարթակներ: Հանդիսությունների դահլիճը նախագծով նախատեսված է 144 նստատեղի համար իսկ մարզասրահի երկրորդ հարկի մակարդակում նախատեսված է 60 տեղանոց տրիբունա, մարզադահլիճի չափերն են՝ 24.7մx18.0 մ: Առաջին հարկի ռեկրեացիայի երկու կողմերում նախագծված են դասասենյակներ, կաբինետներ և բուֆետ, իսկ երկրորդ հարկի ռեկրեացիայի շուրջը՝ դասասենյակներ, ինֆորմատիկայի կաբինետ, մեթոդ կաբինետ, ռազմագիտության դասասենյակ, ռոբոտատեխնիկայի կաբինետ և ուսուցչանոց: Դպրոցի մասնաշենքում նախագծվել է նկուղային հարկ՝ 21.6x20.4 մ, որն օգտագործվելու է նաև որպես թաքստոց: Նկուղային հարկում լինելու են գրադարանը, երկու դասասենյակ, խոհանոցը, բուժկետը, պահոցները, տղաների և աղջիկների սանհանգույցները, էլեկտրովահանակ, ջրի ռեզերվուար, կոյուղու պոմպարան: Թաքստոց տանող աստիճանը հագեցված է աստիճանային ամբարձիչով՝ հաշմանդամների համար: Բոլոր հարկերն իրար հետ կապված են աստիճանների միջոցով և ունեն հարկերը կապող միջհարկային ամբարձիչ՝ հաշմանդամների համար: Գլխավոր մուտքի աստիճանների մոտ նախատեսված է հարթակ դպրոցական բացօդյա միջոցառումների համար: Մանկապարտեզի մասնաշենքը նախագծված է երկու հարկից՝ չորս խմբի համար, և միջանցքով կապված է դպրոցի մասնաշենքի հետ: Առաջին հարկում տեղադրված են հանդերձարաններ, սանհանգույցներ, խաղասենյակներ, ննջասենյակներ, վարիչի, բժշկի և դայակների սենյակներ: Երկրորդ հարկում նույն կազմն է, միայն վարիչի և բժշկի սենյակի փոխարեն ավելացել է հանդիսությունների սենյակ: Նախագծով նախատեսվում է դպրոցի ամբողջ տարածքը բարեկարգել, կառուցել ջերմոց, բաց ցանկապատված մարզադաշտ, վազքուղի, տնտեսական բաք, ավտոկայանատեղի, ինչպես նաև էլեկտրամարտկոցային ֆոտովոլտային արևային վահանակների համար ցանկապատով տարածք: Կրթահամալիրի հողամասն ամբողջ պարագծով նաժատեսվում է ցանկապատել: Կրթահամալիրի տարածքում նախատեսվում է 150 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 300 հատ միաբյուրեղային 580 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 21 ՖՎ խմբի: Էլեկտրոսնուցման արտաքին ցանցերի միացումները կատարվելու են անմիջապես «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ֆինանսավորմամբ: Ջեռուցումը նախատեսված է իրականացնել էլեկտրական յուղային ռադիատորներով: Կրթահամալիրի, այսինքն՝ երկհարկանի մանկապարտեզի, դպրոցի, սպորտսրահի ու հանդիսությունների դահլիճի ջեռուցումը նախատեսված է ջրային, երկխողովականի, համընթաց շարժումով ջրի մեխանիկական շրջանառությամբ համակարգով: Որպես ջեռուցման սարքեր՝ նախատեսված են այլումինե ջեռուցման ռադիատորներ՝ բացառությամբ սպորտսրահից, որտեղ նախատեսված են ջերմային օդամղիչներ:

Նախագծվող կրթահամալիրի ջրամատակարարման համակարգը սնվելու է նկուղային հարկում տեղադրված ռեզերվուարներից  $2 \times (1.7 \times 2.3 \times 1.8 \text{մ } W=7 \text{մ}^3)$ , որոնց կից տեղադրվելու է պոմպային համակարգ բաղկացած 4 պոմպերից, որոնցից 2-ը աշխատում են ջրամատակարարման կարիքների համար, իսկ մյուս 2-ը միանում են հրդեհի դեպքում (Wilo SiBoost Smart 4 HelixVE 404,  $Q=5.0 \text{լ/վրկ}$ ,  $H=30.0 \text{մ}$ ,  $N=4 \times 0.75 \text{կՎտ}$ , 3~400 V): Ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN10 խողովակներից: Տաք ջրամատակարարման էլեկտրական ջրատաքացման համակարգը նախատեսված է պոլիպրոպիլենային PPR PN20 խողովակներից: Բոլոր խողովակները



ջերմամեկուսացվելու են 10 մմ հաստությամբ ռետինե խողովակակտորներով: Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է: Կոյուղին ինքնահոս հեռանալու է բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված սանհագույցների կոյուղին բակային ցանցին է միանալու կոյուղու ճնշումային սարքավորման օգնությամբ: Կենցաղային կոյուղու համակարգը մոնտաժվելու է կոյուղու PVC Ø50 և Ø110 մմ խողովակներով, որը բակային ցանցում միանալու է տարածքում տեղադրված կոյուղու մաքրման կայանին: Մաքրման կայանն իրենից ներկայացնում է կենցաղային կեղտաջրերի մաքրման FBR10 կայան՝ 15 մ<sup>3</sup>/օր արտադրողականությամբ: Նոր դպրոցի կառուցումից հետո, գոյություն ունեցող դպրոցի շենքի քանդման աշխատանքները կիրականացվեն ապամոնտաժման եղանակով՝ փուլ առ փուլ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի ընդհանուր մակերես՝ 16072 մ<sup>2</sup>,
- կառուցապատման մակերես՝ 3521 մ<sup>2</sup>,
- կանաչապատման մակերես՝ 10854 մ<sup>2</sup>,
- անջրանցիկ մակերես՝ 1697 մ<sup>2</sup>,

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի՝ 3865 մ<sup>3</sup>, որն ամբողջությամբ օգտագործվելու է որպես հետլիցք: Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք 1277 մ<sup>3</sup> ծավալով, որի ձեռքբերումը, տեղափոխումն ու օգտագործումը կիրականացվի համաձայնեցնելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Դպրոցի տարածքում կան 77 դեկորատիվ և մրգատու ծառեր: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում դրանցից 31 հատը նախատեսվում է հատել: Սակայն հատված ծառերի փոխարեն նախատեսվում է 10854 մ<sup>2</sup> տարածքում իրականացնել կանաչապատման աշխատանքներ, և տնկվելու ենավելի քան 320 նոր ծառեր: Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում, գործունեության ենթակա տարածքի կանաչապատում, որի պահպանման համար նախատեսվում է՝ կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով, նորատունկ բուսականության, ծառերի չկաչելու դեպքում՝ նոր ծառատեսակներով փոխարինում: Գոյություն ունեցող միջնակարգ դպրոցի շենքի քանդման աշխատանքներն իրականացվելու են Կառավարության N 2093-Ն (30.11.2023) որոշման համաձայն, սահմանված կարգով դպրոցի շենք-շինությունների քանդման արդյունքում առաջացող շինանյութը սեփականության իրավունքով անհատույց կհանձնվի դպրոցի կառուցման աշխատանքներն իրականացնող շինարարական կազմակերպությանը: Ապամոնտաժումից առաջացած և հետագայում օգտագործման համար պիտանի նյութերը՝ որպես երկրորդային շինարարական նյութեր, կտեղապոխվեն կապալառուի բազա և կօգտագործվեն շինարար կապալառուի կողմից՝ այլ շինարարական աշխատանքներում, իսկ քանդման արդյունքում առաջացած շինարարական աղբը, որի ծավալը գնահատվում է շուրջ 5 տ, կտեղափոխվի Մեծամորի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, բեռնման աշխատանքների,



հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն առաջացող փոշու արտանետումների հետ՝ քանդման, փորման աշխատանքների ընթացքում, նաև վառելիքի արտանետումների հետ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում՝

- կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր,
- շենքերի քանդումից շինարարական աղբի առաջացում, որը կօգտագործվի կապալառուի կողմից՝ որպես երկրորդային հումք,
- կենցաղային չտեսակավորված աղբ, որը կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- փորման աշխատանքների ընթացքում առաջացած մնացորդային գրունտ, որը կտեղափոխվի ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք նկարագրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- շինարարական հրապարակի ժամանակավոր ցանկապատում
- շինարարական աղբի կանոնավոր հեռացում թույլատրված աղբավայր, ինչպես նաև շինարարական հրապարակում կենցաղային աղբի համար նախատեսված աղբամանների տեղադրում,
- շինարարական հրապարակի ջրցանում և փոշու արտանետումների մակարդակների կառավարում՝ թույլատրելի նորմերին համապատասխան,



- շինարարական մեքենաների սահմանափակ տեղաշարժ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարների դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին՝ մինչև ժամը 18:00,
- մեքենաների անիվների լվացման և մաքրման միջոցառումներ (կոպիճե մակերեսներ)՝ հրապարակից ցեխի և փոշու տարածումը կանխելու նպատակով,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ մոտակա հանգույցներից,
- վառելիքի և նավթանման նյութերի պահում բետոնե, ավազե հիմքերի կամ մետաղական անթափանց տակդիրների վրա,
- մեքենա-սարքավորումների տեխնիկական սպասարկման իրականացում մասնագիտացված կենտրոններում,
- նախատեսվող գործունեության ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում,
- հնարավոր արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում իրականացնել կանխարգելման միջոցառումներ,
- կապահովվեն առողջության և աշխատանքի անվտանգության ապահովման միջոցառումների ապահովում, ներառյալ՝ բանվորական կազմին սեզոնային արտահագուստի, անձնական պաշտպանիչ միջոցների տրամադրում:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կազմելու են 3 մլն ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** գնահատման հաշվետվության և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Երասխահուն բնակավարի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լուսններում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Արմավիրի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

**Փորձաքննական պահանջներ**

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կանավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումները իրականացումը սահմանված ժամանակահատվածում:



2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել նախագծով նախատեսված լուծումներին համապատասխան՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներով:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:

### ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Լուր» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Երասխահուն բնակավայրի կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Հովակիմ Ֆրունզիկյան